

ԹԵՄԱ 10

| | |
|-----------------------------------|---|
| Դասընթացի անվանումը՝ | «ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները ժառանգական գործերով» |
| Տևողությունը՝ | 16 ակադեմիական ժամ |
| Ժամանակահատվածը՝ | 2012 թ. |
| Անցկացման վայրը՝ | ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ |
| Մասնակիցների առավելագույն քանակը՝ | 25 |

Դասընթացը նախատեսված է առաջին ատյանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական սյալատի դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:

Դասընթացն անդրադառնում է ժառանգության ինստիտուտի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված առավել կարևոր նախադեպային որոշումների ներկայացմանն ու քննարկմանը: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Ժառանգության ընդունումն ըստ կտակի և ըստ օրենքի:
- Ժառանգի պատասխանատվությունը ժառանգատուի պարտքերի համար:
- Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու կարգը:

Դասընթացը վարում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական սյալատի դատավոր Մամիկոն Դրմեյանը: